ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունիսի 26-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի բանկային վավերապայմանների փոփոխության անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում փոխվել են Կապալառուի բանկային վավերապայմանները:
Փոփոխության հիմնավորում	Կապալառուի գրություն և Պայմանագրի 8.5 կետ:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառու կազմակերպության կողմից կանխավճար ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումը և բանկային երաշխիքը:
Փոփոխության նկարագրություն	Համապատասխան համաձայնագրով պայմանագրում կատարվել է փոփոխություն պայմանագրի գումարից կանխավճար տրամադրելու վերաբերյալ:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 8.5 կետ:
3) Փոփոխության առաջացման պատճառ	Նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարված փոփոխությունները և նախագծող կազմակերպության առաջարկությունները
Փոփոխության նկարագրություն	Աշխատանքների մի մասի համար կատարման ժամկետ է սահմանվել 20.03.2020թ.
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

26.06.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի

ք. Երևան « 20» դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր)՝ հիմք ընդունելով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 26.06.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կապալառուի բանկային վավերապայմաններում <<<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ Հ/Հ 220410127454000>> բառերը փոխարինել <<<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 11500905218000>> բառերով.

բ) Պայմանագրի 5.1.1 կետից հետո ավելացնել նոր ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

<<5.1.2 Պայմանագրի գնից մինչև **257 690 715 (երկու հարյուր հիսունյոթ միլիոն վեց հարյուր ինսուն հազար յոթ հարյուր տասնհինգ)** ՀՀ դրամը՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:>>:

գ) Կանխավճարի գումարից 229 988 389 **(երկու հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր ութսունութ հազար երեք հարյուր ութսունինը)** ՀՀ դրամի աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում 20.03.2020թ. ներառյալ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Նոր-Նորքի
կառավարական տուն 3	9-րդ զանգված, 20/53
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական ղեկչություն	Հ/Հ 11500905218000
Հ/Հ 900011012698	ՀՎՀՀ 00843968
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Մ. Միսակյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
26.06.2019թ. կնքված N ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1
գնման պայմանագրի
20.12.2019թ. կնքված N 3 համաձայնագրի

ՀՀ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների իրականացման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Ըստ ամիսների			
	Աշխատանքների անվանումը	Դեկտեմբեր 2019	հունվար 2020	փետրվար 2020	մարտ 2020
1	**Արտաքին հարդարման աշխատանքներ** /Բազալտե բամբակից ջերմամեկուսացվող սալերի իրականացում 70մմ հաստ, 45կգ/խմ խտությամբ, չվառվող,ոտաքին պատերի երեսապատում 8մմ հաստ. գործարանային պայմաններում ներկված ֆիբրոցեմենտե սալերով՝ այլումինե հիմնակմախքի պատրաստումով ,Բետոնե հարթեցնող շերտ 5սմ ,Bp4 ցանցի տեղադրում,Տանիքի երկշերտ ջրամեկուսացում՝ ներքին շերտը մոդիֆիկացված СБС -ով բիտումապոլիմերային պոլիստեր նյութից՝ տակից ջերմակայուն շերտով (պաշտպանիչ պրոֆիլ) 3,5 կգ/քմ, վերին շերտը մոդիֆիկացված СБС բիտումապոլիմերային պոլիստեր նյութից, տակից (պաշտպանիչ պրոֆիլ) վերին շերտում խոշորահատիկ ծածկույթով՝ 5,0 կգ/քմ, 8 հատ օդափոխության դրենաժային սնկերի տեղադրմամբ:/				
2	***Արևային Մարդկոցներ*** /Տանիքում տեղադրվող արևային բազմաբյուրեղային ֆոտովոլտային պանելների ձեռք բերում և տեղադրում, 2000*1000*35/40մմ չափերի, 1հատ պանելը 315Վ հզորությամբ (ներառյալ անհրաժեշտ սարքավորումները և ղեկավարող համակարգը), 10 տարի երաշխիքային գործարանային ժամկետով՝ շահագործման ժամկետը ոչ պակաս 25տ, 1 հատ ինվենտորով, 50կվ հզորությունով:/				
3	***Պատուհաններ*** / Այլումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ (արտերկիր) չբացվող տեղադրումով ,Այլումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ կոփած ապակուց բուրգի տեսքով 8մմ հաստությամբ և 4+4 ապակեփաթեթով (արտերկիր) չբացվող տեղադրումով,Այլումինե ճակատային պրոֆիլով մուգ պատուհաններ (արտերկիր) չբացվող տեղադրումով, Այլումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ (արտերկիր) բացվող տեղադրումով ,Մետաղապլաստե պատուհաններ, տեղադրումով /				
4	***Դռների տեղադրում*** /Արտաքին այլումինե դռներ, ջերմակամրջակով տեղադրումով/				
5	Հարդարման Աշխատանքներ /արտաքին/				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012698
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորքի
9-րդ զանգված, 20/53
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968 Տնօրեն՝
_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
գլխավոր քարտուղար
պարոն Արամ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Զեկուցագիր

Հայտնում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվում են Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի տարածքում նոր հանրակացարանային մասնաշենքի կառուցման աշխատանքները:

Համաձայն 2019 թվականի հունիսի 26-ի ՀՀՔԿ ԲՄԱՇՁԲ-19/1 պետական գնման պայմանագրի <Գազկոմշին> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից պետք է իրականացվեր 425,871.200 հազ դրամի աշխատանքներ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել մի շարք խդիրներ՝ կապված նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված մի շարք նախագծային լուծումները փոփոխելու համար:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հանձնարարությամբ, նախագծային կազմակերպության կողմից կատարվել է վերահաշվարկ նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված հանրակացարանային մասնաշենքի արտաքին պատերի վրա տեղադրվող ուղղահայաց ֆոտովոլտային պանելների էներգաարտադրողականության արդյունավետության վերաբերյալ, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ պանելների արտադրողականությունը տարվա կտրվածքով կկրճատվի 35-40 տոկոսի չափով՝ օպտիմալ (32°-35°) անկյան տակ տեղադրման համեմատ, նշված հանգամանքի մասին փաստում են նաև այլ մասնագիտացված ինժեներական կազմակերպությունները:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N02/27.2/6664-2019 գրությամբ բարձրացված խնդիրներին նախագծային կազմակերպությունը տվել է դրական դիրքորոշում՝ առաջարկելով արտաքին պատերը երեսապատող ֆոտովոլտային պանելների փոխարեն տեղադրել ֆիբրոցեմենտային պանելներ, փքեցրած պերլիտի փոխարեն ջերմամեկուսիչ բազալտե բամբակ 70 մմ իսկ տանիքի գրամեկուսիչ երկշերտ իզոգամը փոխարինել ավելի արդիական տանիքի երկշերտ ջրամեկուսիչով, որի ներքին շերտը մոդիֆիկացված СБС -ով բիտումապոլիմերային պոլիստեր նյութից՝ տակից ջերմակայուն շերտով (պաշտպանիչ պրոֆիլ) 3,5 կգ/քմ, վերին շերտը մոդիֆիկացված СБС բիտումապոլիմերային պոլիստեր նյութից, տակից (պաշտպանիչ պրոֆիլ) վերին շերտում խոշորահատիկ ծածկույթով՝ 5,0 կգ/քմ,:

Հիմք ընդունելով նախագծային կազմակերպության կողմից առաջարկվող փոփոխությունները, որոնք լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն առաջացնում՝

ծավալաթերթ–նախահաշվում կատարվեց փոփոխություններ՝ համապատասխան համադրում և ծավալների ճշգրտում, կնքելով փոփոխված ծավալների համաձայնագիր:

Ներկայումս առկա է ծավալաթերթ – նախահաշվի փոփոխված տարբերակը, որը հաստատվել է կապալառու, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից:

Ծավալաթերթ – նախահաշվի փոփոխությունից հետո՝ կապալառու կազմակերպության կողմից տարվում են մեծածավալ շինարարական աշխատանքներ՝ աճել է շինարարական աշխատանքների տեմպը:

Հաշվի առնելով վերոգրյալ՝ պատասխանատու ստորաբաժանումը առաջարկել էր կապալի պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն, նախատեսելով, որ 2019 թվականին հատկացված գումարների չիրացված 257,690.714 հազ դրամը, որպես կանխավճար համապատասխան բանկային երաշխիքի ներկայացման պարագայում կապալարուին տրամադրելու նպատակով:

Միևնույն ժամանակ կարելի է հաշվարկել՝ մնացորդային աշխատանքների մասով, ինչի արդյունքում առձանագրվել է 229,988.389 գումարի չափով աշխատանքներ, որոնք վերոգրյալ փոփոխությունների արդյունքում հնարավոր չէր իրականացնել հաշվետու տարում /փոփոխված աշխատանքներ և դրանց հաջորդող աշխատանքներ՝ համաձայն տեխնոլոգիական հաջորդականության/:

Նշված գումարով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 3 ամիս՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև մարտի 20-ը, ինչի հիմքում ընկած է նաև նախագծող կազմակերպության կողմից ներկայացված օրացուցային գրաֆիկը/կցվում է/:

ՈՒստի՝ հաշվի առնելով վերոգրյալը, պատասխանատու ստորաբաժանումը առաջարկում է 229՝988.389 հազ. դրամ գումարի մասով պայմանագրով նախատեսված տույժեր չկիրառել:

Քաղաքաշինական ծրագրերի
իրականացման վարչության պետ Արսեն Միրզոյան

Շինարարական ծրագրերի բաժնի պետ Ռուբեն Եղիազարյան

Շինարարական ծրագրերի բաժնի
գլխավոր մասնագետ Գագիկ Գևորգյան

ՀՀ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		Ըստ ամիսների			
	Աշխատանքների անվանումը	Դեկտեմբեր 2019	հունվար 2020	փետրվար 2020	մարտ 2020
1	**Արտաքին հարդարման աշխատանքներ** /Բազալտե բամբակից ջերմամեկուսացվող սալերի իրականացում 70մմ հաստ, 45կգ/խմ խտությամբ, չվառվող,ոտաքին պատերի երեսապատում 8մմ հաստ. գործարանային պայմաններում Ներկված ֆիբրոցեմենտե սալերով՝ ալյումինե հիմնակմախքի պատրաստումով ,Բետոնե հարթեցնող շերտ 5սմ ,Եթ4 ցանցի տեղադրում,Տանիքի երկշերտ ջրամեկուսացում՝ Ներքին շերտը մոդիֆիկացված ՍԵՍ -ով բիտումապոլիմերային պոլիստեր նյութից՝ տակից ջերմակայուն շերտով (պաշտպանիչ պրոֆիլ 3,5 կգ/քմ, վերին շերտը մոդիֆիկացված ՍԵՍ բիտումապոլիմերային պոլիստեր նյութից, տակից (պաշտպանիչ պրոֆիլ) վերին շերտում խոշորահատիկ ծածկույթով՝ 5.0 կգ/քմ, 8 հատ օդափոխության դրենաժային մսկերի տեղադրմամբ:/				
2	**Արևային Մարդկոցներ** /Տանիքում տեղադրվող արևային բազմաբյուրեղային ֆոտովոլտային պանելների ծեռք բերում և տեղադրում, 2000*1000*35/40մմ չափերի, 1հատ պանելը 315Վ հզորությամբ (ներառյալ անհրաժեշտ սարքավորումները և ղեկավարող համակարգը), 10 տարի երաշխիքային գործարանային ժամկետով՝ շահագործման ժամկետը ոչ պակաս 25տ, 1 հատ ինվենտորով, 50կվ հզորությունով:/				
3	**Պատուհաններ** / Ալյումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ (արտերկիր) չբացվող տեղադրումով ,Ալյումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ կոփած ապակուց բուրգի տեսքով 8մմ հաստությամբ և 4+4 ապակեփաթեթով (արտերկիր) չբացվող տեղադրումով,Ալյումինե ճակատային պրոֆիլով մուգ պատուհաններ (արտերկիր) չբացվող տեղադրումով, Ալյումինե ճակատային պրոֆիլով պատուհաններ (արտերկիր) բացվող տեղադրումով ,Մետաղապլաստե պատուհաններ, տեղադրումով /				
4	**Դռների տեղադրում** /Արտաքին ալյումինե դռներ, ջերմակամրջակով տեղադրումով/				
5	Հարդարման Աշխատանքներ				

Ընդհանուրը 229.988.389 (երկու հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր ութսունութ հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ 2019թ. համաձայնագրից

N 8846-02

«23» 12 2019

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեի** (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և **<<ԳԱԶԿՈՄՇԻՆ>> ՍՊԸ-ի** (Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորքի 9 զ., 20,53 ՀՎՀՀ՝ 00843968) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված **Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1 պայմանագրից** (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել **257,690,715 (երկու հարյուր հիսունյոթ միլիոն վեց հարյուր իննսուն հազար յոթ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 11500905218000 հ/հ-ին փոխանցելու պահից և գործում է մինչև **30/12/2020թ. ներառյալ**:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան